

*Racine*

Փետրվար 16, 1953

Արժանաշնորհ  
Տ. Արթուր ԲՀՆԿ. Մմբատեան  
Նախագահ Հոգաբարձութեան  
Ս. Մեսրոպ Եկեղեցեոյ  
Րէյսին, Վիսքոնսին:

---

Արժ. Տէր Հայր,

Ստացուած է Դեկտեմբեր 25 թուակիր Զեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Զեր նախագահութեամբ տեղի ունեցած է Համայնքի Հոգաբարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն իբրեւ Եկեղեցեոյ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ յիշեալին:—

Տիարք  
Պողոս Զօպանեան  
Յարութիւն Գալայճեան  
Սարգիս Զիրքիսեան  
Թադէոս Միքայէլեան  
Յովհաննէս Լեւոնեան  
Թորոս Բէօթօղլանեան  
Արշակ Ազարեան

Կը ներփակենք տպագրեալ տեղեկագրի հորմերը եւ կը յանձնարարենք որ Զեր տեղեկագիրը մեզ փութով ուղարկէք:

Կօրհները նորընտիր Հոգաբարձուները եւ վստահ ենք որ անոնք իրենք ջանքերը միացնելով պաշտօնի վրայ մնացող անդամներուն աշխատանքներուն պիտի գործեն Աստուծոյ փառքին եւ մեր սուրբ Եկեղեցեոյն պայծառութեան համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ

Մնամք Ձերմ սիրոյ ողջունիւ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

# Armenian St. Mesrob Church

*You are the  
MOR:  
You make up  
for what we  
don't do  
to you!*



Դեկտեմբեր 25, 1952

Գեր Տ Տիրան Արքեպիսկոպոս  
Առաջնորդ Ամերիկահայոց  
Ի նիւ-եօրթ, նիւ ԵՕՐՐ:

Սրբազան Հայր,

Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ժողովը գումարուեցաւ  
Դեկտեմբեր 21ի Կիրակի օրը, 170 տրատու անդամներէն 55ի ներկայութեան:  
Ժողովը իր աշխատանքները չկարողացաւ ամբողջացնել սոյն նիստին, եւ որո-  
ւեցաւ ունենալ երկրորդ հաւաքոյթ մը այս Կիրակի օրը: Սակայն անցեալ  
Ժողովի ամբողջացուցած գործերէն մէկը եղաւ 1953 տարւոյ Հոգաբարձութեան  
անդամներու ընտրութիւնը: Ժողովի ամբողջական տեղեկագիրը յետագային  
կուղարկենք, Առաջնորդարանէն տպագրեալ տեղեկագրի ֆօրմերը ստանալէ վերջ:  
Սակայն ներկայիս Ձերը Սրբազնութեան կը փափաքիմ մատուցանել ընտրեալ  
Հոգաբարձութեան անունները վաւերացման համար, որպէսզի կարենան նոր տա-  
րիով սկսիլ իրենց պաշտօններուն: Կուտամ անունները իրենց պաշտօններով  
հանդերձ:

- 1- Տիրա Պօղոս Զօպանեան- Ատենապետ (1 տարի):
- 2- Տիրա Յարութիւն Գալայճեան, Փոխ-ատեն, (2 տարի):
- 3- Տիրա Սարգիս Զիրքիսեան- Գանձապահ (2 տարի)
- 4- Տիրա Դաթէոս Միքայէլեան- Բարտուղար (1 տարի)
- 5- Տիրա Յովհաննէս Լեւոնեան- Լուսարար (1 տարի)
- 6- Տիրա Թորոս Բէօրօղլանեան- Լուսարար (2 տարի)
- 7- Տիրա Արշակ Ազարեան- Խորհրդական (2 տարի)

Մատչելով ի համբոյր & եր Ս Աջոյն  
Սիրով եւ Յարգանօք,  
*Artoon Sempadian*  
Արթուն Բահանայ Սմբատեան,  
Հովիւ: